ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՎ

Ք. Երևան, 23 հուլիսի 2025 թվական

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կառավարման խորհրդի (Խորհուրդ) արտահերթ նիստի

Էլեկտրոնային քվեարկությանը մասնակցեցին՝

Գ. Պապոյան – Էկոնոմիկայի նախարար (Խորհրդի նախագահ)
Ժ. Խառատյան – Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ (Խորհրդի անդամ)
Տ. Սարգսյան – Էկոնոմիկայի նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)
Լ.Նանուշյան – Առողջապահության նախարարի առաջին տեղակալ (Խորհրդի անդամ)
Կ. Չիլինգարյան – <<Սպառողների խորհրդատվության կենտրոն>> հասարակական կազմակերպության նախագահ (Խորհրդի անդամ)
Օ. Աբրահամյան – Արդարադատության նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)
Հ. Զաքոյան – Ազգային ագրարային համալսարանի ռեկտոր

Օրակարգը

1. Հայկ Սարգսյանի թեկնածությանը Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակման համար հավանություն տալու մասին.
2. Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2025 թվականի գնումների անվանացանկում կատարվող փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

Խորհրդի արտահերթ էլեկտրոնային քվեարկությամբ անցկացվող նիստին մասնակցած 7 անդամների 7 կողմ ձայներով որոշվեց՝

1. Հավանություն տալ Հայկ Սարգսյանի թեկնածությանը՝ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակման համար:

2. Համաձայնություն տալ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի գնումների անվանացանկում կատարվող փոփոխությանը:

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ՊԱՊՈՅԱՆ

ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ